Հարցաշար 2024 թ.
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ
11-12–րդ դասարաններ - 120 բոպե
№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Հայրապետական գահին Ս. Արիստակես Ա.-ին հաջորդեց. *(0,5 միավոր)*
   1) Ս. Հուսիկ Ա. 2) Ս. Վրթանես Ա.
   3) Փառեն Ա. Աշտիշատցի 4) Ս. Ներսես Ա.

2. Ե՞րբ է գումարվել Դվինի առաջին ժողովը. *(0,5 միավոր)*
   1) 498 թ. 2) 506 թ.
   3) 515 թ. 4) 554 թ.

3. Ի՞նչ է կոչվում եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը. *(0,5 միավոր)*
   1) Նավակատիք 2) Խաչօրհնեք
   3) Հիմնօրհնեք 4) Նախատոնակ

4. Ս. Ներսես Շնորհալի եկեղեցին ո՞ր թեմի առաջնորդանիստ կենտրոնն է. *(0,5 միավոր)*
   1) Արթիկի 2) Գուգարքի
   3) Տավուշի 4) Գեղարքունիքի

5. Ո՞վ է «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ» աշխատության հեղինակը. *(0,5 միավոր)*
   1) Ս. Ներսես Շնորհալին 2) Ս. Գրիգոր Տաթևացին
   3) Մխիթար Գոշը 4) Վարդան Այգեկցին

6. *Ո՞րն է կաթոլիկ հայերի ընդհանրական պատրիարքի նստավայրը.* *(0,5 միավոր)*
   1) Զմմառի վանքը 2) Բեյրութի Ս. Նշան եկեղեցին
   3) Կ. Պոլսի Ս. Երրորդություն եկեղեցին 4) Անթիլիասի Ս. Աստվածածին վանքը

7. Ո՞ր արարողության վերջում՝ «Քրիստոս, որդի Աստուծոյ» աղոթքի, ընթացքում են հիշատակվում ննջեցյալների անունները. *(0,5 միավոր)*
   1) Խնկարկության 2) Տնօրհնեքի
   3) Անդաստանի 4) Հոգեհանգստյան

8. Ե՞րբ է Խորեն արք. Մուրադբեկյանն ընտրվել Ամենայն Հայոց կաթողիկոս. *(0,5 միավոր)*
   1) 1931 թ. 2) 1932 թ.
   3) 1933 թ. 4) 1934 թ.

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. *---------- մարգարեն խոսելով Երվանդունյաց Հայաստանի մասին, այն համարում է հզոր թագավորություն և հրեաներին խորհուրդ է տալիս Բաբելոնի դեմ մղվող պայքարում դաշնակցել հայերի հետ: (1 միավոր)*

10. *---------- առաքինության հակադիր բևեռը որկրամոլությունն է: (1 միավոր)*

11. *----------Հայաստան երկիրն անվանում է «հայոց լեզվի Թորգոմական աշխարհ»: (1 միավոր)*

12. *XIII-XIV դարերում, Սյունիքի Եղեգիս քաղաքի մոտ կառուցվեց ----------, որտեղ մարտի մեկնելուց առաջ Սիսական գնդերը հայրենիքը և հավատը պաշտպանելու պատվո երդում էին տալիս: (1 միավոր)*

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ

13. Կատարել համապատասխանեցում. *(1 միավոր)*

1. Մարտիրոս
2. Նարոտ
3. Անդաստան
4. Նշխար
5. Ժամերգություն
6. Սկիհ

1	
2	
3	
4	
5	
6	

ա) Ս. Պատարագի ժամանակ օգտագործվող արծաթե կամ ոսկե բաժակ

բ) Մարդ, ով նահատակվել է՝ վկայելով իր հավատը Քրիստոսի հանդեպ

գ) Եկեղեցական արարողություն, որի ժամանակ կատարվում է Հաղորդության խորհուրդ

դ) Կարմիր և սպիտակ թելերի հյուսվածք, որն օգտագործվում է մկրտության խորհրդի ընթացքում

ե) Աշխարհի չորս ծագերի օրհնության արարողություն

զ) Ս. Հաղորդության ժամանակ օգտագործվող խաչի պատկերով կլոր հաց

է) Եկեղեցում օրվա տարբեր ժամերին կատարվող ամենօրյա աղոթքի արարողություն

14. Համապատասխանեցնել. *(1 միավոր)*

1) «Ընչասիրությունը զուգակից է կռապաշտության»:
2) «Ով առաքինություն է ցանում, նա փառք է հնձում»:
3) «Շնորհ տալն Աստծու գործն է, այն պահելն ու պահպանելը՝ քոնը»:
4) «Սկզբում բարի բարքեր, նոր միայն իմաստություն, որովհետև առանց առաջինի չի կարող լինել երկրորդը»:
5) «Բարոյական լինելու համար միայն խելամտությունը շատ քիչ է»:
6) Մեղք է և հեշտ, գործել չարիք
Վարձք և դժվար՝ գործել բարիք:

1	
2	
3	
4	
5	
6	

ա) Նաղաշ Հովնաթան
բ) Ս. Կյուրեղ Երուսաղեմցի
գ) Սենեկա
դ) Իմանուիլ Կանտ
ե) Ս. Եզնիկ Կողբացի
զ) Լեոնարդո դա Վինչի

№ 15-17

Աշխատանք սկզբնաղբյուրով

15. ***«Անցյալի պատմությունը մի լուսավոր լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար»:***

Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը: **(1 միավոր)**

---

16. ***«Տեր Զաքարիան (Զագեցին) գնում է տեսնելու Շեխի որդի Հիսեին (Իսա իբն Շայխ), և նրա կողմից մեծ պատվի է արժանանում, վերջինս նրան տալիս է շատ պարգևներ, նաև դրոշակ՝ վրան խաչ դնելու և դրանով միշտ իր մոտ մտնելու համար»:***

Ու՞մ աշխատությունից է մեջբերված հատվածը: ***(1 միավոր)***

---

17. ***«...Զինվորական քահանան պարտավոր է զինվորներին սովորեցնել «Հայր մեր» աղոթքը և երգել տալ առավոտյան քնից արթնանալուց հետո, երեկոյան քնից առաջ և ճաշին»:***

1) Ո՞ր փաստաթղթից է մեջբերված հատվածը: ***(1 միավոր)***

---

2) Ե՞րբ է Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաստատել այս փաստաթուղթը: ***(1 միավոր)***

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Բերված փաստարկներից ո՞ր երկուսն են սխալ. (2 x 1 = 2 միավոր)

1) Ս. Եզնիկ Կողբացին իր խրատներում պատվիրում է. «Լավ է մաքուր մտքով քնել, քան պիղծ խորհրդով աղոթել և իզուր չարչարվել»:
2) Ս. Գրիգոր Տաթևացին գրել է. «Մինչև որ ժողովուրդը չվարժվի անձնազոհության, չի ունենա իր ազատությունը, մինչև որ ժողովուրդը չվարժվի իր եսը ենթարկելու համայնքին, չի ունենա իր պետականությունը»:
3) Ս. Գրիգոր Նարեկացին գրել է. «Զենքը թշնամիներին հալածելու համար է, որ Աստված զինական արվեստի միջոցով մարդուն սովորեցրեց, թե ինչպե՛ս թշնամիներից պաշտպանվի»:
4) Մխիթար Գոշը գրել է. «Աստվածապաշտ երկրի համար համարձակ մեռեք, որովհետև հենց այդ մահն Աստծո համար է»:
5) Անանիա Շիրակացին գրում է. «Չկա ոչինչ, որ կարելի չլինի բացատրել և չկա ոչինչ, որ անմատչելի լինի բանականությանը»:

19. Թվարկվածներից ո՞ր երկուսը Հայոց Եկեղեցու յոթ առաքինություններից չեն.
(2 x 1 = 2 միավոր)

1) խոնարհություն
2) եղբայրասիրություն
3) հեզություն
4) ողջախոհություն
5) բղջախոհություն
6) ողորմածություն
7) հավատարմություն

20. Շարադրանք (2 միավոր)

Ներկայացնել և մեկնաբանել ավանդական հայ ընտանիքը:
Քրիստոնեական-ազգային արժեքների պահպանումն ընտանիքում ինչպե՞ս կարող է նպաստել «հայ» տեսակի շարունակականությանն ու հարատևմանը: